

Մոգ եւ երբեմն 'ի Պարս էի Յիզկարուզիտ ,
 Ի հեզեզանս անտիս ըզյոյս իմ կառուցեալ .
 Հուր ճարակէր զոստանն իմ . յօգըն ճեպեցի .
 Ճեպեաց 'ի նոյն ու ամենազօր Գրիստեայ ծա-
 ռայն .

Նա զբըննութիւն նուաճէր բոցոյն . իսկ եւ
 պարտեալ
 Չաստուածայինն յաղթութիւն ընկալայ պսակ :

Այսպէս օտար մը , Յոյն մը , բայց
 հաւատարիմ եւ ընտիր հեղինակ մը ,
 Մենանդր , կարճ տողերով գեղեցիկ եւ
 թանկ վկայութիւն մը կու տայ՝ թէ Աս-
 տուածատրոյ յաղթական հաւատոցը ,
 եւ թէ յաղթաութիւն հաւատոց ռամենա-
 զօր ֆրիւտուսի ճառային . որ թէ ոչ
 կաթուղիկոսն Հայոց՝ այլ Դունայ մէկ
 եկեղեցւոյն աւագերեցն էր . որ « զբըն-
 նութիւն նուաճեաց բոցոյն » 'ի ճարա-
 կեն 'ի տան Համակարին , եւ զստուռա-
 ճայիւրն յաղթութեան պսակ իջուց 'ի
 զլուս քրիստոսահրաւէր մոգին Մախու-
 շի , փոխելով զնա 'ի Յիզկարուզիտ , այն
 է Աստուածատուր :

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Թաւնոց բոյներուն խնայելու
 օգոշոր .

Ասեմն մը երբ հիմակուան պէս որ-
 սորգութիւնը յաճախած չէր եւ իրենց
 բոյներուն մէջ աներկիւղ էին թռչուն-
 ներն , ինչպէս է սարեկը , սոխակը ,
 չիկահաւը , թխկատարը , կարմրալան-
 ջը , եկըանիկը , կտաւքաղը , սարեկի-
 կը , կանաչ սարեկիկը , արտոյտը , ցախ-
 սարեկը , եւ այլն , միջին հաշուով ա-
 մեն գարուն մէկ փարսախ քառակու-
 սի երկրի վրայ 10,000 թռչնոյ բոյն կը
 համրուէր ('ի Գաղղիա) . իսկ թէ քանի
 թռչուն պէտք է դնել ամեն մէկ բունի ,
 առաւ միջին հաշուով մը չորս դնենք
 նե՛ շատ չըլլար : Արդ կը մնայ ասոնց
 կերակրոյն տեսակն ու չափն իմանալ .
 տեսակն է որդ , իսկ քանակը քիչ շատ
 ամեն ձագ 15 որդ կ'ուտէ օրուան մէջ .

դնենք 60 մ'ալ իրենց հօրերուն եւ մօ-
 րերնուն համար , որով կ'ըլլայ բոյնի մը
 ամենօրեայ կերակուրը 120 ճճի : Բազ-
 մապատկենք 120ը 10,000ով եւ կ'ընէ
 մէկ միլիոն եւ երկու հարիւր հազար
 ճճի . ասոնք օրուան մէջ կը ջնջուին մէկ
 փարսախ քառակուսի երկրի վրայէն .
 իսկ ամսուան մը մէջ կ'ընէ 36 միլիոն :

Այս հաշիւս դնելէն ետքը , թող որ-
 սորդները մտածեն , որ երբ չեն խնայեր
 այն անմեղ արարածոց , եւ կը թողուն
 որ այնչափ որդունք շատնան մէկ փար-
 սախ քառակուսի երկրի վրայ , ինչ վը-
 նասներ չեն կրնար հասցընել երկրին
 բուսաբերութեանը :

Եւրոպիոյ քաղաւորաց տարեկան
 հասոյքը .

Ռուսաստան	42,582,225 ֆռ .
Տաճկաստան	33,347,050
Գաղղիա	25,000,000
Աւստրիա	19,013,675
Իտալիա	16,850,000
Սպանիա	13,087,500
Մեքսիկա	11,750,000
Բրուսիա	11,750,000
Պաւիերա	6,240,825
Պեւճիա	4,201,400
Փորթուկալ	3,800,000
Յունաստան	1,391,000